ձակ վանդակագծերի պատճառով։ Նույն ձևով կարող էին տեղ գրաղեցնել հաջորդ աղյուսակները։ Ուստի, նկարիչը նախատեսել է նկարել տասից ավելի խորաններ, որոնց շարքում պետք է լիներն նաև № 789-ի խորանները։ Բացի այդ, ձեռագրի սկզբում պետք է որ լիներն Եվսեբիոսի նամակի երկու խորանները։



Նկ. 5

№ 7353 ձեռագիրն ունի մեկ տերունական նկար՝ «Խաչելություն», որը տեղադրված է 98բ լրիվ էջի վրա։ Պատկերի գունային միատոնությունը ստեղծում է այն տպավորությունը, որ դա ոչ թե թղթի վրա կատարված մանրանկար է, այլ՝ մետաղյա խաչի դրվագում (դեղնավուն խաչի վրա Քրիստոսն է, ոտքերի տակ Ադամի գլուխը, իսկ երկու կողմերում, ավելի փոքր խաչերի վրա՝ ավազակները)։

Անվանաթերթում չկան ո՛չ հորինվածքի և ո՛չ էլ զարդարանքի միօրինակություն։ Նրանցից երկուսը ոչ թե կիսախորաններ են, այլ գլխազարդեր. մի բան, որ զարմանալի ավելի կիրառվում էր վաղ շրջանի ձեռագրերում։

Լուսանցազարդերի գերակշռող մասը մոնումենտալ բուսական զարդաձևեր են X—XI դդ. ձեռագրերին համապատասխան։ Դրանց կողքին կան դեկորատիվ զարդեր, որոնցից մի քանիսը հիշեցնում են «կենաց ծառի» տարբերակներ և հարազատ են ժամանակի մանրանկարչությանը։ Նույնը կարելի է ասել զարդագրերի մասին, որոնք մեծ մասամբ քառաթև վարդյակների հետ համատեղված հյուսվածքներ ունեն։ Սրանց մոնումենտալ օրինակները կան վաղ շրջանի մատյաններում, սակայն ավելի մեծ աղերս ունեն XIII դարի Թանատի մանրանկարիչ Հովհաննեսի զարդատառերի հետ։

Ուրեմն, XIII դարի Որոտանի Աղիտու վանքից պահպանված այս միակ ձեռագիրը իր մանրանկարչական արվեստով ավանդարար կապվելով X—XI դդ. հայկական մանրանկարչության հետ, միաժամանակ ընդգրկում է իր ժամանակի գրքարվեստին հարազատ հատկանիշներ։

Ժամանակի դաժան պայմանների հետևանքով ձեռագիրը կորցրել է իր շատ արժեքավոր նկարազարդ թերթերը, որոնք օտարության մեջ պահպանվել ու դիտվել են իբրև X դարի ձեռագրի մասունքներ։ Տ. Կուլումճյանի հրատարակած մատենագիտության շնորհիվ մեզ հայտնի դարձած «կորած» թերթիկները լրացնում և ամբողջացնում են Մաշտոցի անվան Մատենադարանի № 7353 շատ արժեքավոր ձեռագիր մատյանը։

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ. Թ. Ա. VIII—VII ԴԱՐԵՐԻ ԳԱՎԱԹ-ՍԱՓՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում մ. թ. ա. VIII—VII դդ. հուշարձանների պեղումներից հայտնաբերված բազմաթիվ կավանոթների շարքում առանձնանում է երկկանթ սափորների մի յուրօրինակ խումբ։ Բիայնական ամրոցներից, բնակավայրերից և դամբարանային համալիրներից գտնված այս փոքրաթիվ գավաթ-սափորները ունեն կարճ կամ ձգված իրան, հարթ հատակ, աղեղնաձև կանթեր։

Պերսեպոլիսում Քսերքսեսին նվիրված բարձրաքանդակներում պատկերված է տեսարան, որտեղ հայերը տուրք են բերում պարսկական արքային։ Նրանք ձեռքներին բռնած մի շարք իրերի հետ մեկտեղ տանում են նաև բավականին մեծ չափերի (բարձրաքանդակում մարդկային պատկերների մեկ երրորդի չափով) երկկանթ սափոր[1]։ Այն ունի կլորամուտ իրան, ձգված վիզ, աղեղնաձև կանթեր, որոնք վերին մասում ոճավորված են թռչունի բան-

[1] E. F. Schmidt. Persepolis I. Chicago. 1953. plate 29 B.

ղակ պատկերով։ Մետաղից այս անոթը վերաբերվում է աքեմենյան (վաղ հայկական) ժամանակաշրջանին։ Եկակեա ընդունելով այս փաստը, Հայաստանում և Անդրկովկասում պեղումներով գտնված նման ձևի կավանոթները նույնպես թվագրվում էին այդ ժամանակաշրջանով։ Սակայն վերջին տարիներին այդօրինակ կավե սափորների հայտնաբերումը Արարատյան դաշտավայրի բիայնական հուշարձաններում (ինչպիսիք են Էրեբունին, Արգիշտիխինիլին) հնարավորություն ընձեռեց Հ. Մարտիրոսյանին առաջարկելու դրանց ձևերի ավելի վաղ ծագման հարցը[2]։

Քննարկվող երկկանթ սափոր-դավաթների ձևաբանական ուսումնասիրության համար սկզբունքային նշանակություն ունի դրանց իրանների կառուցվածքը, որպես առավել բնորոշ հատկանիշ, ըստ որի այս անոթները բաժանվում են 2 տիպի։

1. Լայնացող, կարճ իրանով սափորներ։ Առաջին տիպի մեջ ընդգրկված անոթները ստորաբաժանվում են երեք տարբերակի.

ա) Կլորացող ուռուցիկ իրանով սափորներ, հայտնի Արգիշտիխինիլիից (աղ. I, 1, 2), Էրեբունիից (աղ. I, 3), Օշականից (աղ. I, 4, 5, 6), Սարյանի փողոցի (Նախկին Մոսկովյան) ուրարտական դամբարանից (աղ. I, 7)։ Սարուխանի № 11 դամբարանից (աղ. I, 8), Կարմիր բլուրից (աղ. I, 10)։

բ) Գնդաձև իրանով սափորներ՝ Արգիշտիխինիլի (աղ. I, 9), Էրեբունի (աղ. I, 12, աղ. II. 6)։

գ) Երկկոն իրանով սափորներ՝ Արգիշտիխինիլի (աղ. II, 2,3)։

2. Նեղացող, ձգված իրանով սափորներ։ Սրանք հայտնի են Արգիշտիխինիլիից (աղ. II, 1, 4, 8), Էրեբունիից (աղ. II, 5,7), Կարմիր բլուրից (աղ. II, 8), Օշականից (աղ. II, 7,9, աղ. III, 1)։ Երկու տիպերում քննարկվող անոթները ունեն ցածր կամ բարձր վիզ, բերանի տարբեր չափերի բացվածքով, որը կախված է վզի կառուցվածքային առանձնահատկություններից։ Այս հատկանշային սկզբունքով սափորները բաժանվում են փողալյունակ և ուղիղ, շուրթի մոտ աննշան լայնացող բերանով անոթների։

Նկարագրվող սափորների կանթերը կըտրվածքում կլոր են, մի քանիսը վերին մասում ուռուցիկ ելուստով զարդարված։ Այս անոթները ունեն նեղ և լայն հարթ հատակներ։

Բացի Խորհրդային Հայաստանի տարածքի հուշարձաններից, նմանատիպ անոթներ գտնվել են նաև Վանի թագավորության հնավայրերից, մասնավորապես Հայկաբերդից (Զավուշթեփե), Բաղնոցից, Բաստամից, Զիվիեից (աղ. III, 4, 5) և այլ կենտրոններից[3]։

Վերջին ժամանակներս մ. թ. ա. VIII դարով թվագրվող Երևանի բիայնական գամբարանից հայտնաբերվել են երկու նմանատիպ սափորների բրոնզե աղեղնաձև կանթեր[4]։ Դրանք Պերսեպոլսի բարձրաքանդակի սափորի հետ միասին հնարավորություն են ընձեռում խոսելու այդ տիպի կավանոթները մետաղական սպասքի ձևերից ընդօրինակված լինելու մասին, որը լայնորեն կիրառվում էր Վանի թագավորության խեցեգործության մեջ։ Այս հանգամանքը որոշակիորեն հուշում է երկկանթ սափորների թվագրման ժամանակաշրջանը, ըստ որի դրանց վաղագույն օրինակները կարելի է թվագրել մ. թ. ա. VIII դարով։

Ինչպես նշում է Հ. Ա. Մարտիրոսյանը[5], այս ձևի անոթները Հայաստանում գոյատևում են նաև Ուրարտուի անկումից հետո, ինչը որ վառ կերպով ներկայացված է վաղ հայկական Քարանլուխ ամրոցի դամբարանային համալիրներում, ինչպես նաև Թեյշեբաինում (մ. թ. ա. VI դար)[6], Էրեբունիում[7] (մ. թ. ա. VI—V դդ.)։

Քննարկվող երկկանթ սափորները (դավաթները), բացառությամբ առանձին օրինակների, հիմնականում դուրկ են զարդամոտիվներից։ Դրանք կարմրավուն, դեղնավուն կամ սև գույնի են, անգորաչատ, իսկ մի քանիսը աչքի են ընկնում իրենց խիստ փայլեցված մակերեսով։ Մի քանի երկկանթ անոթների վրա կան ուռուցիկ, ներճկված գծեր, գոտիներ, որոնք հանդիսանում են կավանոթների հարդարման պարզունակ տարրեր։ Այսպես, Արգիշտիխինիլիի դավաթներից մեկը (աղ. I, 9), ինչպես նաև Էրեբունիից (աղ. II, 6) հայտնաբերվածը վզի տակ ունեն անոթի վերին մա-

---

[2] Հ. Ա. Մարտիրոսյան. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 241.

[3] S. Kroll. Keramik urartäischer Festungen in Iran. Berlin, 1976, typ 83 a.

[4] Ս. Ա. Եսայանի, Լ. Ն. Թիգռովի, Ա. Կանեցյանի պեղումները. նյութերը գրքով ներկայացված են հրատարակության։

[5] А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 139—140.

[6] Նույն տեղում։

[7] С. А. Есаян. Каталог археологических предметов Музея истории города Еревана. Ереван, 1967, с. 115, табл. 27, рис. 2, 7.

սը ուսից անջատող ուռուցիկ հորիզոնական գոտի, որը սովորաբար բնորոշ է մետաղական անոթներին։ Մեկ այլ սափոր, գտնված Սարուխանի № 11 դամբարանից[8] (աղ. I, 8), զարդանախշված է երեք ակոս-գոտիներով, տեղադրված անոթի իրանի կենտրոնում։

Եթե վերը թվարկված անոթները բուրգերն են հարուստ զարդամոտիվներից, ապա նմանատիպ երկու սափորներ, գտնված Էրեբունիից (աղ. I, 3) և Արդիշտիխինիլիից (աղ. II, 2), աչքի են ընկնում իրենց բավականին հարուստ նախշազարդ հորինվածքներով։ Դրանցից առաջինը՝ Էրեբունիից գտնվածը[9], ունի կարմիր անգորաբատ փայլուն մակերես, իրանը բաժանված է նախշազարդ գոտիներով, բաղ-



Աղ. I

[8] А. С. Пилипосян. Раскопки в с. Сарухан.—В кн. Археологические открытия—1984. М., 1986, с. 436.

[9] Մ. Իսրայելյան. Էրեբունի բերդքաղաքի պատմություն. Երևան, 1971, աղ. 27։

կացած երեք ներՀկված, հորիզոնական գծերից, իսկ իրանին և շուրթի տակ արված են իրար հաջորդող սուր ծայրերով դեպի ներքև ուղղված բացվարդադույն, մուգ-կարմրավուն երանգավորումով եռանկյուններ։ Երկրորդ երկկանթանի սափորը, գտնված Արդիշտիխինիլիից[10], ձևով և զարդամոտիվների համակարգով նույնությամբ համընկնում է նախորդի հետ։ Քննարկվող անոթները հարդարող երկշարք հորիզոնական եռանկյունիների նախաշարադրումը կատարված է անզորի հեռացման եղանակով, որից հետո եռանկյունիները լցվել են իրար հաջորդող կարմիր, դեղնավուն գունային երանգախաղով։ Նման եղանակով սափորների հարդարումը բնորոշ է բիայնական տարբեր ձևերի երկգույն անոթներին։ Մասնավորապես հանդիպում է Էրեբունիից, Արդիշտիխինիլիից գտնված տարբեր բեկորների վրա։ Մինչև վերջերս գտնված նման երկկանթ սափորների վրա չէր արձանագրված ոչ մի նշան, դաշ. սակայն Արդիշտիխինիլիի[11] պեղումներից հայտնաբերված կարմիր անգորապատ դավաթը այդ խմբին պատկանող անոթներից առաջինն է, որի հատակին արված է վարպետի նշան խաչի տեսքով, կատարված խաղադծման եղանակով։ Նմանատիպ նշանները Վանի թագավորության խեցեգործության մեջ ունեցել են բավականին լայն տարածում և հայտնի են բազմապիսի խեցանոթների՝ կարասների, թասերի, ստվարների և այլ տիպի մեծ ու փոքր տարայի ձևերի վրա, պեղված Կարմիր Բլուրից, Էրեբունիից, Օշականից, Արաղածից, ինչպես և Արևմտյան Հայաստանի մի շարք հնավայրերից։ Դրանք հանդիսանում են վարպետի (արհեստանոցի) նշան։

Խեցեղենի այս խմբին մենք պայմանականորեն վերագրում ենք նաև Արաղածի բիայնական ամրոցի բնակելի համալիրներից (№ 2 կացարան) հայտնաբերված անոթը (աղ. III, 2,3)։ Այն դեղնավուն է, շագանակագույն երանգավորման հետքերով, մակերեսը ունի բարձրորակ անգորապատում։ Սափորը ունի կլորավուն իրան, բարձր լայնացող վիզ, փոքր հարթ հատակ։ Ի տարբերություն վերոհիշյալ սափոր-գավաթների, Արաղածից հայտնի անոթը ունի մեկ կանթ, որի ստորին մասում իրանի վրա փայլեցման եղանակով արված է N տառ հիշեցնող վարպետի նշան։ Նմանօրինակ միականթ սափորները բիայնական խեցեգործության մեջ ունեցել են լայն տարածում և հայտնաբերվել են Թոփրակ կալեից (Վան)։ Իգդիրից, ինչպես նաև բիայնական այլ կենտրոններից[12] (աղ. III, 7,8) ու դամբարաններից։

Երկկանթ սափորների մեջ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Զանգեզուրի Հարշիս գյուղի տարածքում հայտնաբերված անոթը[13]։ Այդ դամբարանային համալիրում բացի խեցեղենից գտնվել են նաև սկյութական տիպի բրոնզե նետասլաք, երկաթյա դանակ և այլ առարկաներ, որի հիման վրա Օ. Խնկիկյանը հիշյալ դամբարանը թվագրում է մ. թ. ա. VII—VI դդ.։ Մեզ հետաքրքրող (աղ. I, 11) սև անփայլ անոթը ունի ուռուցիկ կլորավուն իրան, բարձր վիզ, հարթ հատակ։ Այս անոթը ձևաբանորեն նմանակվում է վերը հիշատակվածներին, իսկ կանթերի կառուցվածքի առանձնահատկություններով ամբողջովին տարբերվում դրանցից։ Սափորի կանթերը կենտրոնական հատվածում ունեն ծնկաձև կորություն, իսկ վերին մասում դրանք ավարտվում են պարույրաձև նախշով։ Անոթի ողորկ արտաքին մակերևույթ ունի վարպետորեն կատարված զարդանախշում, բաղկացած երկրաչափական մոտիվի մի քանի տարբերից։ Իրանի վերին մասով անցնում է թույլ արտահայտված հորիզոնական ակոս-գոտի, վերևից եղրափակվող մեկմեկու հաջորդող սուր ծայրերով ներքև ուղղված, կետադարդերով լցված եռանկյունիների շարքով։ Նման նախշազարդ գոտի կա նաև սափորի հատակամերձ մասում։ Անոթի կենտրոնը հարդարված է երկշարք դիդղաներով, իսկ ուսին արված է սեպաձև ուռուցիկ ծեփանախշ։ Թեև Զանգեզուրից հայտնաբերված անոթը ձևով նույնությամբ կրկնում է բիայնական վերոհիշյալ երկկանթ սափորները, բայց և այնպես այն, անկասկած, հանդիսանում է տեղական խեցեգործական արտադրության նմուշ։ Այդ օրինակը բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Տվյալ դեպքում վառ կերպով արտահայտված է խեցեգործության բնագավառում փոխներթափանցման ու փոխադդեցության փաստը բիայնական և տեղական մշակույթների միջև, ինչը որ նկատվում է

---

[10] А. А. Мартиросян. Аргиштихинили. Ереван, 1974, с. 148, рис. 72.

[11] Գ. Ա. Տիրացյան. Արմավիրի պեղումներ. Հայկ. ԽՍՀ-ում 1985—86 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ. Երևան, 1987, էջ 39։

[12] S. Kroll. Op. Cit.

[13] Օ. Խնկիկյանի պեղումները, որին շնորհակալություն ենք հայտնում չհրատարակված նյութից օգտվելու հնարավորություն տալու համար։

Նաև ուրիշ տիպի անոթների (մեկ կանթանի սափորներ. թասեր, փիալաներ, ինչպես և բրոնզե գոտիների, մանգաղատիպ դանակների և մի շարք այլ առարկաներ) դեպքում։

Եթե Հարշիսից հայտնաբերված անոթը զուրկ է անգոբապատումից, ապա երկու սև իրենց բարձր որակի անգոբապատումով և փայլուն մակերեսով։ Դրանց պատրաստման բարդ ձևը, բարձր որակը և խեցու բաղադրության ուսումնասիրությունը որոշակիորեն մատնանշում են այդ անոթների անմիջական կապը բիայնական խեցեգործական ավան-



Աղ. II

գույնի անոթներ, գտնված էրեբունիից։ Թաղագյուղից[14] (աղ. III, 9), այլի են ընկնում դույթների հետ։ Հիշարժան է, որ Թաղագյուղից հայտնաբերված սափորի մակերեսի անգոբապատումը համընկնում է նույն դամբարանից հայտնաբերված աճյունաստիսրինի, ինչպես նաև

[14] ՀՊԹ 1624/25

Կարմիր բլուրից գտնված սև փայլեցված անոթներին հետ։ Այս նյութերի մանրամասն վերլուծականը մեկ անգամ ևս ապացուցում է, որ նման սև փայլեցված անոթների խումբը ունի բրայնական ծագում։

Քննարկվող երկկանթ անոթները գտնվել են բակրկիթ մշակույթի և կարելի է վերագրել հանդիսական կամ ծիսական սպասքի տիպին։ Հավանական է, որ նմանատիպ խեցեղենը օգտագործվել է ինչ-ինչ ծիսական արարողությունների ժամանակ, կապված հեղուկի (ջրի, գինու) օգտագործման հետ։ Հ. Ա. Մարտիրոսյանը[15]



Աղ. III

քիչ քանակությամբ։ Դրանք, հավանաբար, օգտագործվել են ոչ ամենօրյա տնտեսական կարիքների համար։ Սափոր-գավաթների խումբը աչքի է ընկնում խեցու բարձրորակ հատկություններով, մանրակրկիտ մշակմամբ և կարելի է վերագրել հանդիսական կամ ծիսական սպասքի տիպին։ Հավանական է, որ նմանատիպ խեցեղենը օգտագործվել է ինչ-ինչ ծիսական արարողությունների ժամանակ, կապված հեղուկի (ջրի, գինու) օգտագործման հետ։ Հ. Ա. Մարտիրոսյանը[15]

[15] А. А. Мартиросян. Аргиштихинили, с. 148.

գտնում է, որ Արգիշտիխինիլիում դրանք հիմնականում գտնվում են բնակելի համալիրների սրբազան անկյուններում, ըստ երևույթին հանդիսանալով այդ անկյունները հարգարելու անհրաժեշտ առարկաներ։ Նույնը նկատվում է նաև Արագածի պեղումների ժամանակ։

Նման երկկանթ սափոր-գավաթներ հայտնաբերվել են նաև մի շարք դամբարանային համալիրներում՝ Օշական[16], Երևան[17], Թազագյուղ և այլն։

Ինչ վերաբերում է այս անոթների թվագրմանը, ապա այստեղ գլխավորը դրանց կառուցվածքային առանձնահատկությունն է, ինչպես նաև առանձին հատկանիշների, մասնավորապես կանթերի տարբերությունը։ Պարզվում է, որ այն սափորները, որոնց կանթերը վերին մասում ունեն ուռուցիկ ելուստներ, բիայնական խեցեգործական արտադրությունում հանդես են գալիս մ. թ. ա. VIII դարից։ Այս հատկանշային տարրը շարունակվում է գոյատևել ավելի ուշ ժամանակաշրջանի անոթների կանթերի վրա՝ մ. թ. ա. VII—VI դդ., աստիճանաբար սակավանալով։

Նմանօրինակ անոթների հայտնագործությունները վերը հիշատակված հնավայրերից, ի թիվս դրանց նաև բրոնզե անոթների կանթերը Երևանի բիայնական դամբարանից, մեր կարծիքով վերջնականապես հաստատում են այս խմբի սափորների թվագրումը, որի համաձայն դրանք Վանի թագավորության նյութական մշակույթում՝ խեցեգործության բնագավառում, ի հայտ են գալիս մ. թ. ա. VIII դարից ոչ շուտ։ Քննարկվող երկկանթ գավաթ-սափորները, որքանով որ հայտնի է, իրենց ձևերով ամենահինն են Հայաստանում, չնայած երկկանթանի անոթները Առաջավոր Ասիայում հանդիպում են ավելի վաղ։

Հայաստանում ավելի ուշ ժամանակաշրջանում (վաղ հայկական, հելլենիստական) հանդիպող նման անոթների գոյատևման փաստը մասնավորապես բացատրվում է մշակութային ժառանգականությամբ, ինչպես նաև ավանդական փոխազդեցություններով։

Բացի երկկանթ սափորներից, բիայնական ժամանակաշրջանին պատկանող անոթների մի քանի ձևեր[18] (թասեր, մեկ կանթանի սափորներ և այլն) նույնպես շարունակել են գոյատևել Վանի թագավորության անկումից հետո, արդեն որպես հայ պետականության ժամանակաշրջանի մշակութային նմուշներ։

Հ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

[16] С. А. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Ереван, 1988, с. 76—81.

[17] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 241.

[18] Գ. Ա. Տիրացյան. Ուրարտու և Հայաստան.— «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 53։

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻՑ ԳՏՆՎԱԾ ՄԱՆԳԱՂԱՁԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՐՈՇ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուշ բրոնզի դարաշրջանում Հայաստանում և Անդրկովկասում լայն տարածում են ստանում բրոնզե մանգաղաձև գործիքների որոշ տեսակներ, որոնք ըստ կիրառման հնարավորությունների կարելի է բաժանել երկու մեծ խմբի։ Առաջին, հիմնական խումբն են կազմում բրոնզե հաստ թիթեղից պատրաստված մանգաղները, որոնց շեղբը մեջքի կողմում հաստ է և բարակում է դեպի սայրը։ Կոթառի լայնացող մասում, եզրերին արված են անցքեր բռնակը ամրացնելու համար։ Նմանօրինակ մանգաղներ Հայաստանում և Անդրկովկասում առաջին անգամ հանդես են գալիս մ. թ. ա. III հազարամյակից և հայտնի են Գառնիի, Նախիջևանի, Քյուլթեփեի, Ամիրանիսգորայի, վաղ բրոնզեդարյան շերտերի պեղումներից[1]։

Ուշ բրոնզի դարաշրջանում վերոհիշյալ տիպի մանգաղներ գտնվել են Նոր Բայազետից, Թաքիայից, Անիից, Սարատովկայից, Խաշտարակից, Լուսաձորից, Կիրովականից, Նոյեմբեր-

[1] Б. Н. Аракелян. Гарни I. Ереван, 1959, с. 25, рис. 12; Է. Վ. Խանզադյան. Գառնի IV. Երևան, 1969, էջ 42, նկ. 34։ О. А. Абибулаев. Некоторые итоги изучения холма Кюльтепа в Азербайджане.—СА, 1963, № 3, с. 69; Т. Н. Чубинишвили. Амиранис—Гора. Тбилиси, 1963, с. 73, рис. 14.